Հավելված 7
«ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/35»* **ծածկագրով**
Գնանշման հարցման մրցույթի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/35

ք. Բյուրեղավան «21» հոկտեմբեր 2021թ.

«Բյուրեղավանի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Հ. Բալասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Բյուրեղավան համայնքում ասֆալտապատման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 15 սեպտեմբեր 2021 թվական:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացույցային օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 27536330 (քսանյոթ միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամ, որից 4589388 (չորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար երեք հարյուր ութսունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան Հասցեն՝ համայնք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք ՀՎՀՀ-03546187 Հ/Հ900102565190 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Համայնքի ղեկավար Հ. Բալասյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	ԿԱՊԱԼԱՌՈՒ «Բալահովիտ-1» ՍՊԸ ՀՀ Կոտայքի մ., գ. Բալահովիտ ՀՎՀՀ 03502736 Բանկը՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ հ/հ 1150010198560100 ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 21 » հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/35 ծածկագրով պայմանագր

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Բյուրեղավան համայնքի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Ծավալ	Միավ.գինը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6
	I Օղակաձև փողոց				
1	10ᵉIV բնահողի (հին ծածկի) քանդում $h_{միջ.}$=20սմ 0.65մ^3 շ.տ. էքս. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ^2/մ^3/տ	200/40/78	0,300	60,000
2	Նույնը քանդում բուլդոզերով կուտակումով 20մ հեռ.	մ^2/մ^3	200/40	0,032	6,400
3	Նույնը ձեռքով կողքի կուտակումով	մ^2/մ^3	32/6.4	0,961	30,752
4	Նախօրոք կուտակված բնահողի բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. էքս. ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3/տ	46.4/90.5	1,325	61,480
5	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմներով	մ^2	432	0,014	6,048
6	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ^2	մ^2	432	3,397	1467,504
7	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ^2	432	5,375	2322,000
8	10ᵉIV բնահողի մշակում ձեռքով, բարձում 0.65մ^3 շ.տ. էքս. և տեղափոխում 2կմ լցակույտ	մ^3/տ	10.61/20.7	7,140	75,755
9	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ^3	3,35	6,210	20,804
10	Б-1-20 վաքերի հիդրոմեկուսացում բիտումով 2-շերտ	մ^2	57,95	1,328	76,958
11	Б-1-20 վաքերի տեղադրում	հատ/գծմ/մ^3	61/61/6.1	3,423	208,803
	II N1 շենքի բակի լայնացում				
1	10eIV բնահողի (հին ծածկի) քանդում հմիջ.=20սմ 0.65մ^3 շ.տ. էքս. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ^2/մ^3/տ	50/10/19.5	0,300	15,000
2	Նույնը քանդում բուլդոզերով կուտակումով 20մ հեռ.	մ^2/մ^3	50/10	0,032	1,600
3	Նույնը ձեռքով կողքի կուտակումով	մ^2/մ^3	11/2.2	0,961	10,571
4	Նախօրոք կուտակված բնահողի բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. էքս. ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3/տ	12.2/23.8	1,096	13,371
5	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմներով	մ^2	111	0,014	1,554
6	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ^2	մ^2	111	2,850	316,350
7	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ^2	111	4,425	491,175
	III N6 շենքի հետնամաս				
1	10ᵉIV բնահողի (հին ծածկի) քանդում $h_{միջ.}$=10սմ 0.65մ^3 շ.տ. էքս. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ^2/մ^3/տ	90/9/17.5	0,124	11,160
2	Նույնը քանդում բուլդոզերով կուտակումով 20մ հեռ.	մ^2/մ^3	90/9	0,032	2,880
3	Նույնը ձեռքով կողքի կուտակումով	մ^2/մ^3	20/2.0	0,961	19,220
4	Նախօրոք կուտակված բնահողի բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. էքս. ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3/տ	11/21.5	1,094	12,034
5	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմներով	մ^2	200	0,014	2,800
6	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ^2	մ^2	200	2,850	570,000
7	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ^2	200	4,425	885,000
	IV N20 շենքի մոտեցում				
1	10ᵉIV բնահողի (հին ծածկի) քանդում $h_{միջ.}$=20սմ 0.65մ^3 շ.տ. էքս. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ^2/մ^3/տ	35/7.0/13.7	0,300	10,500
2	Նույնը քանդում բուլդոզերով կուտակումով 20մ հեռ.	մ^2/մ^3	35/7.0	0,032	1,120
3	Նույնը ձեռքով կողքի կուտակումով	մ^2/մ^3	5.5/1.1	0,961	5,286
4	Նախօրոք կուտակված բնահողի բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. էքս. ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ^3/տ	8.1/15.8	0,575	4,658
5	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմներով	մ^2	75,5	0,014	1,057
6	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ^2	մ^2	75,5	2,850	215,175
7	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ^2	75,5	4,425	334,088

1	2	3	4	5	6
8	10eIV բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ³/տ	1.12/2.2	6,239	6,988
9	Բետոնե 15x30 եզրաքարերի տեղադրում B-15 բետոնե հիմքով 3.5մ³/100գծմ	գծմ	14	9,980	139,720
10	Հին բետոնե 15x30 եզրաքարերի քանդում, բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	գծմ/տ	11/1.32	1,168	12,848
	V N12-15 շենքերի մոտեցում				
1	10eIV բնահողի (հին ծածկի) քանդում հմիջ.=10սմ 0.65մ3 շ.տ. էքս. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ²/մ³/տ	250/25/48.8	0,124	31,000
2	Նույնը քանդում բուլդոզերով կուտակումով 20մ հեռ.	մ²/մ³	250/25	0,032	8,000
3	Նույնը ձեռքով կողքի կուտակումով	մ²/մ³	20/2	0,961	19,220
4	Նախօրոք կուտակված բնահողի բարձում էքս. 0.65մ³ շ.տ. էքս. ա/ի և	մ³/տ	27/52.7	1,093	29,511
5	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմներով	մ²	520	0,014	7,280
6	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	520	2,850	1482,000
7	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ²	520	4,425	2301,000
8	Բազալտե 15x30 եզրաքարերի ապամոնտաժում, բարձում ձեռքով և տեղափոխում 2կմ լցակույտ	գծմ/տ	18/2.2	1,162	20,916
9	Բազալտե 15x30 եզրաքարերի ապամոնտաժում կուտակումով	գծմ	120	1,084	130,080
10	Ապամոնտաժված 15x30 բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե B-15 հիմքով 3.5մ³/100գծմ	գծմ	120	2,916	349,920
11	Եզրաքարերի տեղադրման համար խրամուղու փորում ձեռքով 10eIV բնահողում, բարձում ա/ի և տեղադրում լցակույտ 2կմ	մ³/տ	11/21.5	6,188	68,068
12	Նոր 15x30 բազալտե եզրաքարերի տեղադրում B-15 բետոնե հիմքով 3.5մ³/100գծմ	գծմ	18	9,923	178,614
13	Բազալտե 8x10 եզրաշար B-15 բետոնե հիմքով 2.8մ³/100գծմ	գծմ	10	4,105	41,050
14	Դիտահորերի բարձրացում և նորոգում B-20 միաձույլ բետոնով	հատ/մ³	3/0.36	10,077	30,231
	VI Մոտեցում գերեզմաններին				
1	Հողային պաստառի հարթեցում մեխանիզմներով	մ²	648	0,014	9,072
2	Խճային հիմք h=12սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	648	2,610	1691,280
3	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ²	648	4,425	2867,400
	VII Գիշերօթիկ դպրոցի մոտ				
1	Մայթի սալիկապատ հին ծածկի քանդում ձեռքով բետոնե հիմքի հետ $h_{միջ}$=9սմ և տեղափոխում լցակույտ 2կմ	մ²/մ³/տ	37.6/3.38/7.4	0,471	17,710
2	Մայթի ա/բ ծածկի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ $h_{միջ}$=3սմ	մ²/մ³/տ	110.7/3.32/7.3	0,074	8,192
3	Մայթի հիմքի քանդում $h_{միջ}$=6սմ ձեռքով բարձում ա/ի և տեղ. լցակույտ 2կմ	մ²/մ³/տ	110.7/6.64/11.9	0,444	49,151
4	Բազալտե հին 15x30 եզրաքարերի քանդում և վերադարձ համայնքապետարանին	գծմ	42	1,079	45,318
5	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրման համար խրամուղու փորում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³/տ	3.36/6.6	6,373	21,413
6	Նոր բազալտե 15x30 եզրաքարերի տեղադրում B-15 բետոնե հիմքով 3.5մ³/100գծմ	գծմ	45	9,906	445,770
7	Դիտահորի բարձրացում և նորոգում	հ/մ³	1/0.12	10,077	10,077
8	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20	գծմ	16	1,081	17,296
9	Ավազակոպճային հիմքի տեղադրում h=6սմ	մ²	156,3	0,256	40,013
10	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	156,3	2,943	459,991
11	Փոսային նորոգում հիմքով, երթ. մաս				
	Խճային հիմք h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	11,6	2,605	30,218
	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	11,6	4,425	51,330

1	2	3	4	5	6
	VIII U. Վարդանյան փողոցի N5 շենքի մոտ				
1	Մայթի սալիկապատ հին ծածկի քանդում ձեռքով բետոնե հիմքի հետ $h_{միջ}$=9սմ և տեղափոխում լցակույտ 2կմ	մ²/մ³/տ	22.8/2.05/4.5	1,338	30,506
2	Մայթի ա/բ ծածկի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ $h_{միջ}$=3սմ	մ²/մ³/տ	88/2.64/5.8	0,078	6,864
3	Մայթի հիմքի քանդում $h_{միջ}$=6սմ ձեռքով բարձում ա/ի և տեղ. լցակույտ 2կմ	մ²/մ³/տ	88/5.28/9.5	0,205	18,040
4	Հին բետոնե 15x30 եզրաքարերի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղ. լցակույտ 2կմ	գծմ/տ	49/5.88	1,158	56,742
5	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրման համար խրամուղու փորում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³/տ	3.92/7.6	6,170	24,186
6	Նոր բազալտե 15x30 եզրաքարերի տեղադրում B-15 բետոնե հիմքով 3.5մ³/100գծմ	գծմ	49	9,900	485,100
7	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20 B-15	գծմ	16	1,080	17,280
8	Ավազակոպճային հիմքի տեղադրում h=6սմ	մ²	110,8	0,256	28,365
9	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	110,8	2,943	326,084
10	Փոսային նորոգում հիմքով, երթ. մաս				
	Խճային հիմք h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	9,8	2,605	25,529
	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	9,8	4,425	43,365
	IX Վ. Ա. Վեհափառի փողոցի N9 շենքի մայթ				
1	Մայթի սալիկապատ հին ծածկի քանդում ձեռքով բետոնե հիմքի հետ $h_{միջ}$=9սմ և տեղափոխում լցակույտ 2կմ	մ²/մ³/տ	69/6.2/13.6	0,597	41,193
2	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20, բետոն B-15	գծմ	8	1,081	8,648
3	Ավազակոպճային շերտի տեղադրում h=6սմ	մ²	69	0,256	17,664
4	Ավազային ա/բ ծածկ h=3սմ	մ²	69	2,943	203,067
	X Նուռնուս, Գլխավոր փողոց 39				
1	10ɜV կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³/տ	54/113.4	1,579	85,266
2	Հողային պաստառի հարթեցում ձեռքով	մ²	60	0,329	19,740
3	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	60	2,850	171,000
4	Մանրահատիկ ա/բ շերտ h=5սմ	մ²	60	4,425	265,500
	XI Նուռնուս, Գլխավոր փողոց 8-րդ փակուղի				
1	10ɜV կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³/տ	25/52.5	1,579	39,475
2	Հողային պաստառի հարթեցում ձեռքով	մ²	137,5	0,329	45,238
3	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	137,5	2,850	391,875
4	Մանրահատիկ ա/բ շերտ h=5սմ	մ²	137,5	4,425	608,438
	XIII Նուռնուս, Գլխավոր փողոց 4-րդ փակուղի				
1	Հողային պաստառի հարթեցում ձեռքով	մ²	270	0,327	88,290
2	Խճային հիմք h=15սմ, բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	270	2,850	769,500
3	Մանրահատիկ ա/բ շերտ h=5սմ	մ²	270	4,425	1194,750
4	Պահուստում 6ɜ IIIկ ավազային բնահողի մշակում, բարձում ա/ի էքս. 0.65մ³ շ.տ. և տեղափոխում 2կմ կողնակների լիցք (ջրում, խտացում)	մ³/տ	36/70.2	1,485	53,460
	ԸՆԴԱՄԵՆԸ՝				**22946,942**
	ԱԱՀ 20 %				**4589,388**
	ԸՆԴՀԱՆՈՒՐ				**27536,330**

1	2	3	4	5	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան

Հասցեն՝ համայնք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք

ՀՎՀՀ-03546187

Հ/Հ900102565190

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Հ. Բալայան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բալահովիտ-1» ՍՊԸ

ՀՀ Կոտայքի մ., գ. Բալահովիտ

ՀՎՀՀ 03502736

Բանկը՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ

h/h 1150010198560100

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.1
« 21 » հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/35 ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

Չափաբաժնի N՝			
Օգտագործվելիք նյութերի			Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
Անվանում	Քանակ	Գումար/դրամ	
խիճ 40-70	366 մ³	1827649	10
խիճ 10-20	31 մ³	139583	
բիտում	9տ	1797476	
մանրահատիկ ա/բ	265տ	6370344	
ավազակոպճային խառնուրդ	28 մ³	42439	
ցեմենտային շաղախ	1 մ³	18710	
բլոկ	61 հատ	427000	
բազալտե եզրաքար 15x30 սմ	126գծմ	655578	
բետոն B15	10 մ³	271768	
բազալտե եզրաշար 8x10 սմ	10գծմ	20000	
բետոն B20	0.5 մ³	13709	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102565190
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բալահովիտ-1» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մ., գ. Բալահովիտ
ՀՎՀՀ 03502736
Բանկը՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
h/h 1150010198560100

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« 21 » հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/35 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*«Բյուրեղավանի համայնքապետարանի» կարիքների համար՝ «Բյուրեղավան համայնքի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ»*	Պայմանագիր կնքելու օրվանից	50 օրացույցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիր կնքելու օրվանից	50 օրացույցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան Վ. Ա
Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102565190
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բալահովիտ-1» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մ., գ. Բալահովիտ
ՀՎՀՀ 03502736
Բանկը՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
հ/հ 1150010198560100

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 21 » հուլիս 2021թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/35 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		Բյուրեղավան համայնքի ճանապարհների ասֆալտապատում	--	--	--	--	--	--	5507266	11014532	13768165	27536330	27536330	27536330	27536330

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան Վ. Ա
Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102565190
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալայան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բալահովիտ-1» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մ., գ. Բալահովիտ
ՀՎՀՀ 03502736
Բանկը՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
h/h 1150010198560100

/ստորագրություն/
Կ.Տ